ցությունների տեսարանը, ուր հոնների առաջնորդը առավել կենդանի էր ստացվել, երևալով իր հակասություններով ու տատանումներով, քան թե վերջնական տեքստում։ Ահա հանված մասերից մեկը. «—Որքա՞ն մեծ գործի համար,—հարցրեց Աթիլլը ոգի պալատական իշխանների գերակշիռ հետաքրքրությունը գրգռելով։—Անհնարինից մինչև ամենամեծ գործի համար,—պատասխանեց Վարդանը անհանգստացնելով ոչ միայն բյուզանդացիներին, այլև իր ուղեկից հայ իշխաններին։—Դու մտածո՞ւմ ես այդ անելով,—դիպավ Աթիլլը Վարդանին։—Դու գիտե՞ս, ինչու ենք դուրս եկել մեր աշխարհներից և մտնում այլ աշխարհներ։ Մենք էլ ունենք մեր հալածող թշնամի։ Նա ուժեղ է ամենաուժեղից։ Ավազը, անապատների զավակներ ենք մենք, և ապրել ենք ավազում։ Մենք գնում ենք զորքով ու ընտանիքով։ Գնում ենք ապրելու, իսկ դու կատակ ես անում, ասելով՝ «Մինչև ամենամեծ գործը»։ Կարող եմ հինգհարյուր հազարով անցնել ձեր երկիրը մինչև Բյուզանդիա։

Բոլորը շունչները պահեցին»[10]։

Տպվածքների վրա կատարված են լեզվա-ոճական ուղղումներ ու ջնջումներ, որոշ դեպքերում լրացվել են տեքստերը, ճշտվել ու բնորոշվել բառերը։ Նախնական տեքստում եղել է. «Իշխան, հարցում տամ քեզ և տուր ինձ պատասխան, ո՞վ է մեր տերը»։ Վերամշակելիս՝ Դեմիրճյանը լրացրել է այս նախադասությունը, վերացրել տեքստի անորոշությունը. այսպես՝ «—Իշխան հարցում տամ քեզ, տուր ինձ պատասխան։ Չեմ հասկանում, ըն Մամիկոնենից տերը բողել է մեզ... բայց երբ բողել է մեզ, ո՞վ է մեր տերը»[11]։ Երբեմն էլ նա փոխում է տեքստի այս կամ այն մասը, մտցնում նոր մանրամասներ, մանրամասներ։ «Առաջին անգամ նա (Վարդանը) կյանքում կորցրել էր իրեն։ Առաջին անգամ նա խաբում էր իրեն, և ուրիշներին, կեղծում, խարդախում։ Նա զգում էր իրեն այնպիսի խայթ, այնքան ամոթանք»։ Նախնական այս տեքստը նա մշակել է այսպես. «Առաջին անգամ կյանքում նա [illegible] է այնպիսի անսովոր մի հոգեկան [illegible]։ Առաջին անգամ էր տեսնում, որ մարդիկ խաբում են իրենց և ուրիշներին, կեղծում, խարդախում։ Նա զգում էր այնքան ամոթանք»[12]։

«Վարդանանքի» ձեռագրերը խոսուն վկաներն են այն բանի, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարել Դ. Դեմիրճյանը՝ հղկելով ու կատարելագործելով իր այդ սքանչելի ստեղծագործությունը։

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԻ «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

XIX դարի 80-ական թվականների արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, որը սկզբնավորեց թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի վերսկսած պայքարի նոր շրջանը։

«Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին բավական հանգամանալից տեղեկություններ կան ժամանակի հայ, որոշ չափով նաև ռուս և եվրոպական մամուլի էջերում։ Ավելի ուշ (1905 թ.), հուշերի կարգով նրա գործունեության են անդրադարձել Բ. Մելիք-Գրիգորյանը և Հ. Նշկյանը։ Ապա գիտական հոդվածով հանդես եկավ Սարուխանը «Գործ» ամսագրի 1917 թ. № 3-ում։ Հ. Նշկյանի հուշագրությունները, «Առաջին կայծերը» վերնագրով, առանձին գրքույկով հրապարակվեցին 1930 թ.։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Մ. Օրմանյանի «Խոհ և խոսք» աշխատությունում եղած մի քանի, բայց արժեքավոր էջերը։

Սովետահայ պատմագրության մեջ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության պատմությանը համակողմանիորեն անդրադարձել է պրոֆ. Մ. Ներսիսյանը իր «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» աշխատության մեջ։ Հեղինակը ինչպես ժամանակի մամուլի, այնպես էլ արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ Տիգրան Կերեքցյանի

---

10 Նույն տեղում, էջ 438—439։

11 Նույն տեղում, էջ 25։

12 Նույն տեղում, էջ 433։

ձեռագիր հուշերի, Թուրքիայի ռուսական հյուպատոսների զեկուցագրերի և այլ նյութերի) հիման վրա ըստ արժանվույն վերլուծել և գնահատել է «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության գործունեությունը։

Սույն հոդվածում մեր նպատակն է «Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությանն անդրադառնալ այն նոր նյութերի բննությամբ, որոնք մենք հայտնաբերել ենք Երևանի և Մոսկվայի արխիվներում, ինչպես նաև քաղել Սարուխանի վերը նշված հոդվածում և Հ. Նշկյանի ու Մ. Օրմանյանի հուշերում։

Արխիվային նոր փաստաթղթերից առավել արժեքավոր են ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության արվեստի և գրականության թանգարանում պահվող՝ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին Կարինի դատաստանական ատյանի մեղադրական եզրակացության պատճենը, Կարինի թեմի այդ ժամանակվա առաջնորդ Մ. Օրմանյանի՝ այդ դեպքերի մասին Ներսես պատրիարքին գրած նամակները, ինչպես նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (ՌԱՔԱ) պահպանվող և միայն վերջերս մեր կողմից հրապարակված Կարինի ռուսական գլխավոր հյուպատոս Ա. Դենների և Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի մի քանի զեկուցագրերը։

* *

«Պաշտպան հայրենյաց»-ը հիմնադրվեց 1881 թ. երիզագործ Խաչատուր Կերեքցյանի ջանքերով և իր գործունեության դանդաղ ու խաթարված ընթացքով հարատևեց մինչև 1890-ական թթ. սկզբները[1]։

Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում էր հինգ հոգուց կազմված գլխավոր խորհուրդը (Գերագույն խորհուրդ), առանց գրավոր կանոնադրության։ Կազմակերպության առաջնահերթ խնդիրն էր հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը, որի մասին հետագայում վկայում են նրա բանտարկված ու թուրքական դատարանի առջև կանգնած անդամները, իսկ հիմնական նպատակը՝ Հայաստանի անկախության վերականգնումը, որը, հասկանալի պատճառներով, նրանք չեն խոստովանում։

«Պաշտպան հայրենյաց»-ը կառուցված էր տասնապետության կազմակերպական սկզբունքով։ Նրա տարբեր ջոկատներում ընդգրկված աշխարհազորայինները նախօրոք ոչ մի առնչություն չպետք է ունենային միմյանց հետ, չպետք է ճանաչեին ընկերության հիմնադիրներին ու ղեկավար գործիչներին։ Կազմակերպության անդամներից, առանց բացառության, երդում էին ընդունում և այդ երդմնագրերը պահվում էին տասնապետների մոտ։ Ապա նրանք ստանում էին կազմակերպության անդամատոմսեր, որոնք «Պ. Հ.» («Պաշտպան հայրենյաց») դրոշմով թերթիկներ էին։ Երդմնագրերի վրա նկարված էր խաչաձևված թուր և դաշույն ու գրված էր «ազգային բարենպատակ ձեռնարկ», որը հետամուտ էր հայ ժողովրդին ազատագրել քրդերի, չերքեզների և թուրքական պաշտոնյաների դաժան բռնությունից։ Այն վերջանում էր «Ազատություն կամ մահ» նշանաբանով[2]։

Երդմնագրերի օրինակը առաջինը ստորագրած Ալեքսան Էթալիկյանը, որն իր վրա էր վերցրել դեռ կազմակերպական շրջանում գտնվող ընկերությանը սեփական միջոցներից դրամական օժանդակություն ցույց տալու գործը, Գերագույն խորհրդի հանձնարարությամբ հետևողականորեն ձեռնամուխ է լինում կազմակերպության մեջ նոր անդամների հավաքագրմանը։

Կարինի դատաստանական ատյանի մեղադրական եզրակացության ակտում կան հետաքրքիր հատվածներ «Պաշտպան հայրենյաց»-ի մեջ ընդունելության կազմակերպման մասին։ «Ալեք-

---

[1] «Պաշտպան հայրենյաց»-ի մինչև 1890-ական թ. սկիզբը գոյություն ունենալու մասին մեր ենթադրության համար հիմք է հանդիսանում կազմակերպության հայտնաբերումից հետո ձերբակալությունից ազատ մնացած նրա ղեկավար անդամների՝ Ա. Վեմյանի, Մ. Նշկյանի և Դ. Չլինկիրյանի ստորագրությամբ Թիֆլիս ուղարկված նամակը, ուր նրանք քննարկելով կազմակերպության անկման պատճառները նոր ծրագիր էին առաջարկում Թիֆլիսի իրենց համախոհներին (տե՛ս «Հայրենիք» շաբաթաթերթը, 1905 թ., 9 դեկտեմբերի, Բոստոն)։ Այդ մասին է վկայում նաև Հ. Նշկյանն իր «Առաջին կայծերը» գրքում, նշելով, որ 1886 թ. բանտից ազատվելուց հետո Խ. Կերեքցյանը և Հ. Իշղալացյանը նորից փորձեցին աշխուժացնել արդեն մարող շարժումը։ Եվ վերջապես, 1890 թ. Կարինի հայտնի ցույցի ժամանակ, ըմբոստացողները հիմնականում «Պաշտպան հայրենյաց»-ի նախկին անդամներն էին, որ նորից համախմբվել էին Խ. Կերեքցյանի շուրջը։

2 Հ. Նշկյան, Առաջին կայծերը, 1930, էջ 122։

սանը (Ալեքսան Էթալիկյանը—Ռ. Հ.),—կարդում ենք այնտեղ,—դիմում է ընկերության մեջ ընդունվողներին հետևյալ խոսքերով. «Ես գրանցում եմ ձեզ ընկերության մեջ որպես զինվոր։ Հարկ եղած ժամանակ ձեզ կրաժանվի զենք և ամեն օր կստանաք մեկական մեջիդիե[3]։ Մենք կվերականգնենք [մեր] թագավորությունը»։ Բացի այդ նրա կողմից տարածվում էին հեղափոխական այլ մտքեր։ Գալուստին նշանակված էր ամսական երեք լիրա[4] վարձ, որից 9 լիրան Ալեքսանդրի կողմից նրան տրված էր նախորդ, համագործակիցներից (ընկերության անդամներից—Ռ. Հ.) նախկին վկայականները հավաքելու և նրանց նոր, համարակալված վկայականներով փոխարինելու համար, որոնցից նա հասցրել էր բաժանել մոտ 80-ը»[5]։

Հողագործ Սարգիս Բարոյանը, Գեղախոտ գյուղից կարնեցի դերձակ Շավարշ Հովհաննիսյանի կողմից ընդունվելով կազմակերպության շարքերը, իր հերթին անդամագրել էր Բեղախոտի և հարևան գյուղերի հարյուր գյուղացու։ Հովհաննես Ասատուրյանը գրանցել է ձիթողցի վարժապետ Գալուստ Ժամկոչյանի տասնյակի անդամներին, «... որոնց տներից վնասակար հայտարարություններ պարունակող թղթեր երևան ելած են»[6]։ Համետագործ-ասպանդակագործ Հակոբ Պետրոսյանը կոշկակար Հակոբ Սերոբյանին ընկերության մեջ ընդունելիս ասել էր. «Ես գրանցում եմ քեզ աշխարհազորում, կտամ քեզ զենք, դու կստանաս օրական մեկ մեջիդիե և եմասնակցես քաղաքից դուրս զինվորական ուսուցումներին»։ Թարրին Մինաս Էլպեկյանը Ալեքսան Էթալիկյանից ստացած 130 հավաքագրական վկայականները հանձնել է ջրաղացպան Խաչատուր Ավագյանին։ Վերջինս հավաքագրել էր հինգ հոգի, այդ թվում Հաջի Հովհաննեսին, որից երդում ընդունելով, բաժանելու համար հանձնել էր անդամագրման 100 վկայական։ Հայկական աշխարհազորի մեջ տարբեր ժամանակներում ընդգրկված մի շարք անունների թվարկումից հետո մեղադրական ակտում կարդում ենք. «Թաթոսը հայտնել է Ալեքսանին, որ իր կողմից զինվորներ են հավաքագրվում հայկական թագավորության առաջիկա կազմակերպման կապակցությամբ»[7]։

Պետք է մերժել մի ժամանակ ընդունված այն սխալ տեսակետը, թե «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության՝ ջոկատների ու վաշտերի բաժանված լինելը իրը դյուրացրել է նրա անդամների մասսայական ձերբակալումը, որովհետև հարյուրապետները մատնել են տասնապետներին, իսկ տասնապետներն էլ խմբի անդամներին և հակառակը[9]։ Ընդհակառակը, տասնապետության սկզբունքը, որի շնորհիվ կազմակերպության անդամներից քչերն էին միմյանց ճանաչել, շատերին հնարավորություն տվեց հետագայում խուսափել ձերբակալությունից։ «Ձերբակալվածները 73 հոգին անդին չանցան, զի տասնապետական դրության հետևությամբ ընկերակիցների ծանոթությունը անձուկ շրջանակի մեջ կը պարփակվեր...»,—իր հուշերում պատմում է այդ դեպքերի լավատեղյակ ականատեսն ու մասնակիցը[10]։ Ձերբակալությունների ժամանակ Պալաս Տեր-Ղազարյանի մոտ գտնված անդամատոմսը կրել է 4374 համարը[11], այդ մեզ իրավունք է տալիս առանց չափազանցության մեջ ընկնելու պնդել, որ կազմակերպության անդամների թիվը անցել է հինգ հազարից։

Երբ կազմակերպությունն ապրում էր դեռ իր գաղափարական ու գործնական աշխատանքների որոնումների շրջանը, Խ. Կերեբցյանը մեկնում է Վան և հանդիպում ունենում Մկրտիչ

---

3 Մեկ մեջիդիեն (20 ղուրուշ) ռուսական այն ժամանակվա դրամով կազմում էր 1 ռ. 60 կոպ.։

4 Մեկ լիրան (5 մեջիդիե) հավասար էր ռուսական 8 ռուբլու։

5 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII, 11519։

6 Նույն տեղում։

7 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (հետագայում ՌԱՔԱ), ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625։ Տե՛ս նաև ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII, 11519։

8 ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625։

9 Տե՛ս «Մասիս», 1882, № 3367 և «Արձագանք», 1883, № 7։

10 Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 120։

11 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, նաև «Մասիս», 1883, № 3463։ Մեղադրական ակտի Կարինի առաջնորդարանից Կ. Պոլիս ուղարկված պատճենում՝ № 4274 (տե՛ս ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII, 11519)։

Խրիմյանի հետ։ Վանից Խ. Կերեքցյանը, Խրիմյանի խորհրդով, անցնում է Թիֆլիս, ապա՝ Երևան։ Թիֆլիսում հանդիպումներ է ունենում արևելահայ մի շարք գործիչների հետ։ Ապստամբության հարցը խոր և բազմակողմանի ուսումնասիրելու և կազմակերպության աշխատանքներն ավելի գործնական դարձնելու համար որոշվում է Թիֆլիսի գործիչներից մեկին ուղարկել Կարին։ Այդ նպատակով 1882 թ. հուլիսին Կարին են գալիս Բագրատ Նավասարդյանը և Արսեն Թոխմախյանը։ 1882 թ. ամռանը Նավասարդյանը Կ. Պոլսում հանդիպում է ունենում Ն. Վարժապետյանի հետ, ապա այցելում Կարին, Վան, կազմակերպության գործունեության հետ կապված տարբեր հարցերի շուրջը համաձայնության գալիս Մ. Օրմանյանի ու Մ. Խրիմյանի հետ։ Կարինում Նավասարդյանն օգնում է «Պաշտպան հայրենյաց»-ի կազմակերպական ամրապնդմանը։

1881 թ. նոյեմբերի 1-ին առևտրական գործունեության պատրվակով Թիֆլիս մեկնեց կազմակերպության հիմնադիրներից մեկը, Գերագույն խորհրդի անդամ Կարապետ Նշկյանը՝ դրամ հայթայթելու և զենք տեղափոխելու նպատակով։ Առատ խոստումներ ստանալով, մի քանի ամսից նա դարձավ Կարին։ Անցնում էին օրեր, ամիսներ, սակայն խոստացված օգնությունն ուշանում էր։ Եվ ահա Գեոագույն խորհրդի նիստերից մեկում Խ. Կերեքցյանը հանդես է գալիս մի հանդուգն ծրագրով՝ զենք ու զինամթերք ձեռք բերելու համար հարձակվել Կարինի կառավարական զինապահեստի վրա։ Այս առաջարկությունը բուռն վիճաբանությունների տեղիք է տալիս և մեծամասնությամբ մերժվում, ուժերի՝ իրենց համար ոչ նպաստավոր փոխհարաբերակցության պատճառով։ Որոշվում է չհապաղել և Կ. Նշկյանին նորից ուղարկել Թիֆլիս, խոստացված օգնությունն արագացնելու նպատակով։ Թիֆլիսում Նշկյանը մի շարք հանդիպումներ է ունենում տեղի հայ գործիչների, այդ թվում՝ Գր. Արծրունու և Տ. Տեր-Ասատուրյանի հետ։

Թիֆլիսում Նշկյանին առանձին անձինք խորհուրդ են տալիս շուտափույթ կերպով ոչնչացնել բոլոր տեսակի երդմնագրերը, անդամատոմսերն ու մյուս վտանգավոր թղթերը, որոնք կարող են ընկնել թուրքական ոստիկանության ձեռքը և դառնալ կազմակերպության հայտնաբերման պատճառ։ Ինչպես իրավացիորեն գրում է Մ. Օրմանյանը, «...ընկերակիցներու արձանագրության տոմսեր բաշխելու ձևը գազանության պահանջին չէր հարմարեր և ձախող հետևանք ալ ունեցավ»[12]։ Ինքը՝ Օրմանյանն սկզբում տեղյակ չէր «Պաշտպան հայրենյաց»-ի գոյությանը, բայց հետո դարձավ նրա ակտիվ մասնակիցը՝ ապահովելով նաև Ներսես պատրիարքի աջակցությունը։

«Պաշտպան հայրենյաց»-ի անդամների համար սահմանված էր անդամավճար՝ տարեկան մեկ քառորդ մեջիդեն. հավաքված գումարով պետք է զենք գնվեր։ Նախատեսվում էր զենքի հայթայթումը կազմակերպել հայ վաճառականների միջոցով և խիստ ցածր գներով, իսկ հարկ եղած դեպքում նաև ձրի բաժանել։ Այդ ուղիով զենք ձեռք բերելու գործում կարենցիք որոշ փորձ ունեին. դեռ 1877 թ. սկսած վաճառականներ Հ. Եգանյանը և Հ. Նշկյանը Կ. Պոլսից զենք էին տեղափոխում Կարին և վաճառում հատկապես հայերին[13]. Զենք ձեռք բերելու համար կամավոր նվիրատվություններ էին կատարում կազմակերպության քիչ թե շատ ունևոր անդամները։ Տարբեր նպատակների անվան տակ անց էր կացվում հանգանակություն։

Կազմակերպությունն ուներ նաև զինագործական գաղտնի փոքրիկ արհեստանոց՝ Զայդարայի հեռավոր թաղամասում, Կարինի հայտնի զինագործ Ավետիս Վեմյանի ղեկավարությամբ, որը բանտարկությունների նախօրյակին պատրաստվում էր մեկնել Զեյթուն, որպես կազմակերպության ներկայացուցիչ և մնալ այնտեղ, հավանարար Զեյթունում կենտրոնացված զինագործարան ստեղծելու նպատակով։

«Պաշտպան հայրենյաց»-ի ղեկավարությունը տեղերում իրագործելու նպատակով որոշվում է Արևմտյան Հայաստանի քաղաքներում ստեղծել հինգական մարդուց կազմված «հեղափոխական խորհուրդներ»։ Այդ որոշումը մասամբ իրագործվում է։ Որոշված էր կենտրոնների համար նշանարանը ամիսը մեկ փոխել։

Շարժման ալիքը իր մեջ էր առել առաջին հերթին Արևմտյան Հայաստանի մեծ քաղաքները, ինչպես նաև Թուրքիայի հայաբնակ շատ այլ վայրեր։ «Ամենուր պատրաստ են զենքի դիմելու, որպեսզի թոթափեն թուրքական լուծը»,—գրում էին ժամանակի մամուլի ռուսական ու եվրոպական բազմաթիվ օրգաններ[14]։ Կազմակերպությունը պատրաստել և տարածել էր հեղափոխական թռուցիկներ։ Խուզարկությունների ժամանակ այդպիսի թռուցիկներ գտնվեցին

12 Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 119։
13 Տե՛ս Հ. Նշկյան. Առաջին կայծերը, 1930, էջ 27—29։
14 Տե՛ս, օրինակ, «Московский телеграф», 1883, № 2 և այլ թերթեր։

Թաթոսի մոտ, ինչպես նաև ձերբակալվածներից շատերի տներում։ Ալեքսան Էթալիկյանի և Գորեպան Կարապետի բնակարաններում հայտնաբերվեցին դրանց տպագրության վիմագրական քարերը։ Թռուցիկները մերկացնում ու դատապարտում էին Թուրքական բարբարոսական կարգերը և կոչ անում համախմբվել ու պայքարել նրա տապալման համար։

Կերեքցյանների տանը, որտեղ սկզբում տեղավորված էր «Պաշտպան հայրենյաց»-ի գաղտնի վիմագրատունը, տպագրվում են կազմակերպության 2400 անդամատոմսեր։ Քաղաքից դուրս, պայուսակով Խ. Կերեքցյանը ջորեպան Հարությունին է հանձնում երեք հարյուր անդամատոմս. դրանք ուղարկվում են Վանի հեղափոխական խորհրդին, որի հետ, հավանաբար իր Վանում եղած ժամանակ, Խ. Կերեքցյանը Խրիմյանի միջոցով համաձայնության էր եկել միավորվելու միասին։ Հետագայում այդ կապը շարունակվում էր՝ վերածվելով ավելի սերտ համագործակցության։ Ըստ երևույթին, Վանի հեղափոխական խորհուրդը «Պաշտպան հայրենյաց»-ից շատ առաջ Վանում ստեղծված «Սև խաղ» կազմակերպության գործադիր օրգանն էր, որի գործունեությունը հեղափոխական որոշակի բնույթ ստացավ հատկապես «Պաշտպան հայրենյաց»-ի հետ կապվելուց հետո։ «Պաշտպան հայրենյաց»-ի Գերագույն խորհուրդը մտադիր էր կապեր հաստատել նաև բուրդ ցեղապետների հետ, սակայն այդ ուղղությամբ կազմակերպության ձեռնարկած նվազ ջանքերը վերջացան անհաջողությամբ։

1882 թ. նոյեմբերին «Պաշտպան հայրենյաց»-ը պատահականորեն հայտնաբերվեց թուրքական իշխանությունների կողմից։ Նոյեմբերի 25-ին Մելիքսետիկ քահանայի տան առջև բարձրացրած աղմուկի ժամանակ վրա հասած ոստիկանները ձերբակալում են «Պաշտպան հայրենյաց»-ի մի քանի անդամների և տանում ոստիկանատուն։ Խուզարկության ժամանակ Պալաս Տեր-Լազարյանի և Հարությունի մոտ հայտնաբերվում են ընկերության անդամատոմսեր, հավանաբար՝ նաև այլ թղթեր։ Խոշտանգումներին երկար չդիմանալով Պալասը հանձնվում է և մատնում նկարիչ Միքայել Մանուկյանին, գուցե նաև իր հարյուրապետ Ալեքսանդր Էթալիկյանին և այն տասնյակի անդամներին, որի հրամանատարն էր ինքը։ Լսելով, որ կազմակերպությունը հայտնաբերված է, նկարիչ Միքայելը ներկայանում է ոստիկանատուն և խոստանում ամեն ինչ ճշտությամբ ու մանրամասնորեն պատմել, եթե իրեն կընդունեն ոչ թե որպես շարժման մասնակից, այլ որպես վկա, լրատու («մյուխպիր») և կվարձատրեն։ Կուսակալը երդումով խոստանում է երկուսն էլ։ Միքայելի մատնությամբ ձերբակալվում են Գերագույն խորհրդի՝ քաղաքում գտնվող անդամները, բացառությամբ Եղ. Տուրյանյանի, ապա և «Պաշտպան հայրենյաց»-ի բազմաթիվ շարքային անդամներ, որոնց թիվը սակայն 72-ից չի անցնում՝ շնորհիվ կազմակերպության տասնապետական կառուցվածքի։ Չնայած բոլոր խոշտանգումներին, Խ. Կերեքցյանն ու նրա ընկերները չմատնեցին Թիֆլիսի իրենց բարեկամներին, որոնցով դատաքննիչները փութաջանորեն հետաքրքրվում էին։

Կազմակերպության հայտնաբերումից անմիջապես հետո թուրքական իշխանությունները սարսափի մեջ ընկան, և կուսակալի տենդագին հեռագրերն ազդարարեցին այն մասին, որ ողջ Արևմտյան Հայաստանը հեղափոխական շարժման մեջ է և առաջիկայում Ռուսաստանի օժանդակությամբ ապստամբություն է բարձրացնելու։ Ապա օգնության խուճապային աղաղակները արձագանքեցին ամբողջ կայսրության մեջ, և Երզնկայում տեղավորված թուրքական չորրորդ բանակը «բալեց Կարինի վրա»։ Քաղաքի ամբոցների հրանոթները ուղղվեցին դեպի հայկական թաղամասերը։ Տեղական զինվորները ու ոստիկանությունը լրացուցիչ փամփուշտ ստացան և ամենուր պատերազմական ժամանակների պահակություն սահմանվեց։ Այնպիսի իրարանցում էր սկսվել, կարծես «ահեղ բանակ մը օսմանյան գահուն հաստատությանը սպառնա»[15]։ Բայց հետո, երբ պարզվեց, որ այդպիսի իրարանցման հարկ չկա, նրանք հանդարտվեցին. Կ. Պոլսից ստացված հրահանգների համաձայն, ձերբակալություններն ու հարցաքննությունները սկսեցին կատարվել ավելի գաղտնի, իսկ օտարերկրյա դիտորդներին շարժումը ներկայացվեց որպես տեղական բնույթ ունեցող աննշան մի դեպք։

Կազմակերպությունը հայտնաբերվելու հաջորդ օրը Խաչատուր Կերեքցյանի կրտսեր եղբայրը հեղափոխական կոչերով և այլ փաստաթղթերով լի արկղը բեռնակիր Հովհաննեսի միջոցով Պողոս Թերզիբաշի (Իշղալացյան) տանից տեղափոխում է առաջնորդարանի ծառա Մարուքի բնակարանը և նրա հետ միասին այրում այնտեղ եղած թղթերը՝ գուցե դրանով էլ շատերին փրկելով անխուսափելի պատժից։

---

15 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ. Թ. Ագատյանի ֆ., XII, 11507։

Բանտում ահավոր խոշտանգումների էին ենթարկում ձերբակալվածներին։ Բայց ոչինչ չէր վհատեցնում հայրենասերներին։

Այդ օրերին Կարինի հույները մի փոքրիկ գումար են հավաքում և իրենց առաջնորդի միջոցով հանձնում Օրմանյանին՝ ձերբակալվածների ընտանիքներին օգնելու նպատակով։ Դա հույն ազգաբնակչության լուռ համերաշխության նշանն էր[17]։

1883 թ. ապրիլի 6-ին ավարտվեց մեղադրական եզրակացություն հերյուրելու արարողությունը, և պետական մեղադրողը հայտարարեց, որ կազմակերպության անդամները ցանկացել են հեղափոխական ճանապարհով Թուրքիայից անջատել «օսմանյան երկրների մի մասը, այսինքն Էրզրումը և շրջակայքը»[18]։ 1883 թ. ապրիլի 7-ին սկսվում է «Պաշտպան հայրենյաց»-ի անդամների դատավարությունը, որն արևմտահայերի առաջին քաղաքական դատն էր Թուրքիայում։ Պետական ամբաստանագրով մեղադրվում են 57 մարդ (56 թուրքահպատակ և մեկ ռուսահպատակ)։ Նկարիչ Միքայել Մանուկյանը, որպես վկա, ազատ է արձակվում, ուստի դատապարտվում են 56 մեղադրյալ։ Ապա Կ. Պոլսից, դատապարտյալների բողոքարկների հիման վրա և պատրիարքարանի ջանքերով, գործը վերադարձվում է նոր քննության։ Այս անգամ 16-ը ազատվում են, իսկ 40-ը դատապարտվում տարբեր ժամկետների (5—15 տարի) բանտարկության։ Որպես ղեկավարներ դատապարտվում են Խաչատուր Կերեքցյանը՝ 15 տարվա, Կարապետ Նշկյանը (հեռակա կարգով)՝ 13 տարվա, Հակոբ Իշղալացյանն ու Հովհաննես Ասատուրյանը՝ 10-ական տարվա և Ալեքսան Էթալիկյանը՝ 7 տարվա բանտարգելության։ Չորս գործիչներ դատապարտվում են 6, իսկ 31-ը՝ 5-ական տարվա ազատազրկման։

Դատապարտյալները Կ. Պոլիս են ուղարկում մի բողոքագիր, ուր փորձում էին հերքել իրենց վրա բարդված մեղադրանքը՝ միաժամանակ բողոքելով հարցաքննության ու դատավարության կամայական ընթացքի դեմ և խնդրում էին իրենց արդարացնել։ Կ. Պոլսում վճիռը բեկանվեց և ետ ուղարկվեց նոր քննության, բայց 1883 թ. մայիսի 31-ին Կարինի դատարանը, Կ. Պոլսից ստացած ցուցումով, նորից հաստատեց իր նախորդ վճիռը։ Ավելի ուշ, Թուրքիայի արդարադատության մինիստրի 1884 թ. հունիսի 6-ի հրամանագրի համաձայն, հունիսի 22-ին (հուլիսի 4-ին) 5 տարվա ազատազրկման դատապարտվածները, որպես երրորդ կարգի հանցագործներ, ազատ արձակվեցին, իսկ 6 տարով դատապարտված չորս մեղադրյալների և 7 տարվա դատապարտված Ալ. Էթալիկյանի (երկրորդ կարգ) պատիժը կրելու ժամկետները երկու երրորդով կրճատվեցին։ Առաջին կարգով դատված համարվողների պատժաչափը մնաց նույնը։ Մի քանի ամիս անց, 1884 թ. նոյեմբերի 14-ին ազատվեցին նաև մյուսները, բացի Խ. Կերեքցյանից, Հ. Ասատուրյանից և Հ. Իշղալացյանից, որոնք ազատվեցին 1886 թ. սեպտեմբերին։

«Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հայտնաբերումից անմիջապես հետո թուրքական իշխանությունները թխել էին մի հրեշավոր սուտ՝ օտարերկրյա գործակալների դավեր նրշմարելով նրա գործունեության մեջ։ Նրանք փութացին ներկայացնել այն որպես հայկական մի խոշոր ապստամբության սկիզբ, որն իրենք արյան մեջ պիտի խեղդեն։ Բայց շուտով, վախենալով, որ այդ ցնցող լուրը կրքերն առավել հրահրելով ավելի լուրջ հուզումներ կառաջացնի և միջամտության նոր առիթ կտա «քրիստոնյաների պաշտպան» Եվրոպային, իջեցրին կազմակերպության ու նրա գործունեության նշանակությունը մինչև քրեական ինչ-որ հանցանքների աստիճանի։

Որոշակի պատճառներով «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը տարբեր ձևերով է ներկայացվել նաև ժամանակի հայ և օտար մամուլի էջերում։ Ի. Դռան և տեղերում մահմեդական ամբոխի գրգռմանը տեղիք չտալու մտայնությունը ստիպում էր Կ. Պոլսի հայկական լրագրերին համեմատաբար քիչ և մակերեսորեն անդրադառնալ Կարինի և նրա հետ առնչվող դեպքերին։ Կ. Պոլսում հրատարակվող «Մամուլ» լրագիրը հանդիմանում էր «Մասիս»-ի խմբագրին, որ նա տակավին պաշտոնապես չհաստատված լուրերը «կանուխեն առաջ նետվելով շատ չը խառնակշտե»՝ իզուր տեղը կասկածն ու թշնամությունն ավելացնելով։ «Օտար թերթերը,— շարունակում է «Մամուլ»-ը,—օտար շահերով ու նկատառումներով կրնան շատ մի բաներ գրել, իսկ հայ թերթի մը բնավ երբեք նկատելի չէ, որ յուր կարծիքները կանխահաս լուրերու վրա հիմնելով խելքին փչածը հրատարակե»[19]։ Քիչ անց արդեն «Մասիս»-ն իր հերթին մեղադրում

16 Տե՛ս Մ ա ր, Թուրքական բանտերը, ԺՆև, 1906, էջ 15։

17 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ. Թ. Ազատյանի ֆ., XII, 11508։

18 Նույն տեղում, XII, 11519, նաև «Մասիս», 1883, № 3463—3464։

19 «Մամուլ», 1882, № 973։

էր «Մշակ»-ին՝ «Պաշտպան հայրենյաց»-ը հակասույթանական քաղաքական կազմակերպություն ներկայացնելու համար[20]։

Եթե Բ. Դուոր և նրա թելադրանքով թուրքական թերթերը փորձում էին Եվրոպային միջամտելու առիթ չտալու համար թուլացնել տպավորությունը, ապա հենց հանուն այդ միջամտության Լոնդոնից 1882 թ. դեկտեմբերի 27-ի (1883 թ. հունվարի 8-ի) հեռագրով եվրոպական բոլոր թերթերը ազդարարում էին. «Այն շարժումը, որ սկսվել է Տաճկական Հայաստանում, շատ ծանրակշիռ նշանակություն ունի և արդեն տարածվել է Կարնո, Վանի, Բիթլիսի և Տիգրանակերտի վիլայեթների վրա»[21]։

Թուրքական կառավարությունը Կարինում ձերբակալություններն սկսելուց երկու շաբաթ էլ չանցած արդեն զգացել էր հարցը չափից դուրս մեծացնելու իր սխալի վտանգավորությունը և փորձում էր դրան ավելի մեղմ կերպարանք տալ։

Իրականում այդ շարժումը համաժողովրդական բնույթ ուներ։ «Պաշտպան հայրենյաց»-ը իր ճյուղավորումներով տարածվել էր ողջ Արևմտյան Հայաստանում և կապեր էր ստեղծել արևելահայության հետ՝ փորձելով հանդես գալ որպես արևմտահայ աշխատավորության սոցիալական ու քաղաքական շահագործման դեմ ուղղված ժողովրդական ընդվզումների համահավաք կենտրոն։

Կազմակերպության լայն հենարանը քաղաքի արհեստավորական դասն էր և շրջակա գյուղացիությունը։ «...Դրեթե բոլորը կա՛մ բոլորովին կարոտ են, կա՛մ օրը աշխատող և օրը ուտող»,—գրում էր Օրմանյանը, «Պաշտպան հայրենյաց»-ի բանտարկված անդամների մասին[22], Հիրավի, մեկ-երկու վաճառականի, դերձակի կամ ուսուցչի բացառությամբ, բոլորն էլ հայ աշխատավորներ էին—կոշկակարներ, դարբիններ, անագողներ, կտավագործներ, ասպանդակագործներ, հյուսներ, մաղագործներ, ջրաղացպաններ, մշակներ, ջորեպաններ և մոտիկ գյուղերի հողի աշխատավորներ։ Այս հանդամանքը ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ առաջին հերթին շահագրգռված էր երկակի ճնշման տակ գտնվող հայ աշխատավորությունը։

1880-ական թթ. երկրորդ կեսին, բանտից ազատված Խ. Կերեքցյանի ու Հ. Իշղալացյանի ուժերով, «Պաշտպան հայրենյաց»-ը որոշ աշխուժություն ապրեց, որը պսակվեց 1890 թ. Կարինում տարաժամ կատարված զինված ելույթով։ Ապա նա դանդաղ մարեց, չնչին դիմադրությամբ տեղը զիջելով առավել կազմակերպված ազգային կուսակցություններին։ Խ. Կերեքցյանը և նրա գաղափարական կողմնակիցներից շատերը, համաձայն չլինելով նոր սաղմնավորված դաշնակցության տակտիկական գծին, տեռորին ու անժամանակ ընդվզումներին (թեպետ 1890 թ. իրենց էլ էր հրապուրել այդ խայծը), պայքար սկսեցին նրա դեմ, որն ավարտվեց մի ահավոր ողբերգությամբ. դաշնակցության տեղական կոմիտեի որոշմամբ 1891 թ. օգոստոսին Խ. Կերեքցյանը տեռորի ենթարկվեց։

«Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությունը Արփ. Արփիարյանը իրավացիորեն գնահատում է որպես Զեյթունի հերոսական ապստամբության նման մի իրադարձություն[23], որը համազգային բնույթ ստանալով, հուշեց հայ ժողովրդին, որ իր ազատությունը նա կարող է ձեռք բերել կազմակերպված, հետևողական ու զինված պայքարով։

«Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն ապրեց միայն իր մանկության շրջանը և դադարեց գոյություն ունենալուց իր ձգտումների կենսագործման համար մղած պայքարի առաջին իսկ քայլերն անելիս։ Բայց նրա գործունեությունը նշանակալից երևույթ էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների մեջ և կազմում էր 1880-ական թթ. սկսված նրա վերելքի փառապսակը։

Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

---

20 «Մասիս», 1883, № 3497։

21 «Մշակ», 1883, № 4։

22 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII, 11512։ Տե՛ս նաև ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625 թ. 83—85։

23 «Մշակ», 1883, № 6։